ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2015 թվականի միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակում Վայոց ձորի մարզում իրականացված աշխատանքների վերաբերյալ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1	Մարզում իրականացնել կնոջ կողմից ղեկավարվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ ծրագրեր	Իրականացվել է սոցիալական աջակցության ծրագիր կնոջ կողմից ղեկավարվող 17 ընտանիքների նկատմամբ Եղեգնաձոր, Ագարակաձոր, Շատին, Ելփին, Եղեգիս, Մալիշկա, Աղնջաձոր համայնքներում	Ֆինանսավորում չի պահանջվել
2	Մարզի առողջապահական հիմնարկների մասնագետների միջոցով համայնքներում կազմակերպել բաց դռների օրեր կանանց և տղամարդկանց առողջական խնդիրների ուսումնասիրության, խորհրդատվության և բուժ.աշխատաքների կազմակերպման համար	Կազմակերպվել է գինեկոլոգիական հետազոտություններ և խորհրդատվություն <<Նատալի Ֆարմ Մալաթիա>> բժշկական կենտրոնի ՓԲԸ-ի կողմից Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում, <<Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական հանրապետական կենտրոն>>-ի բաց դռների օր Եղեգնաձոր և Վայք քաղաքներում	Ֆինանսավորում չի պահանջվել
3	Համայնքներում կազմակերպել կանանց և տղամարդկանց վերամասնագիտացման, մասնագիտությունների ուսուցման և համակարգչային գիտելիքների տիրապետման դասընթացներ	Եղեգնաձոր քաղաքում վերամասնագիտացում և ուսուցում է ստացել 52 կանայք և աղջիկներ / համակարգչային դասընթացներ՝ 12 , ծաղկի դիզայն՝ 12, վարսավիրություն՝ 16, սեղանի ձևավորում՝ 12/:	Հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերով
4	Կանանց քաղաքական ակտիվության բարձրացման, լիդերության խթանման համար կազմակերպել սեմինար-դասընթացներ մարզի քաղաքային համայնքներում	Մարզային երիտասարդական կենտրոնում կազմակերպվել է <<Կինը բիզնեսում և քաղաքականության մեջ>> , <<Երիտասարդ լիդերների դպրոց>> թեմաներով սեմինար հանդիպումներ	Ֆինանսավորում չի պահանջվել

5	Կազմակերպել հանդիպումներ մարզի կրթական, մշակութային և առողջապահական հիմնարկների աշխատողների հետ <<Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին >> ՀՀ օրենքի առանձին հոդվածների ուսումնասիրության և քննարկման նպատակով	Մարզի կրթական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում, առողջարաններում քննարկվել է և<<Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին >> ՀՀ օրենքի որոշ հոդվածներ, լսվել են վերլուծություններ, որոնք վերաբերվել են սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը:	Ֆինանսավորում չի պահանջվել

15.01.2016թ